# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Արարատի մարզ, գ. Դեղձուտ, (094)839565,
dexcuthamaynq@mail.ru,deghdzut.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 8

ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.05.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով ավագանին

որոշում է՝

հաստատել Արարատի մարզի Դեղձուտ համայնքի ավագանու թիվ 3 հերթական նիստի օրակարգը.

1. ,,Դեղձուտ համայնքի 2020թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին,, - հարցը: /Զեկուցող՝ Գ. Զոհրաբյան/

2. ,,Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին,,- հարցը: /Զեկուցող՝ Յ. Մուրադյան/

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (094)839565, dexcuthamaynq@mail.ru,deghdzut.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 9

## ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄՅԱՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 13.02.2020թվականի թիվ 166-Ն որոշումը ավագանին

որոշում է՝

Արարատի մարզի Դեղձուտ համայնքի վարչական բյուջեի եկամուտն ավելացնել՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հատկացված ընթացիկ դրամաշնորհի՝ 607,2հազ.դրամ գումարով, պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացման փոխհատուցման հետ:Ելնելով վերոգրյալից Դեղձուտ համայնքի վարչական բյուջեի ծախսային մասն ավելանում է 607,2հազ.դրամ գումարով, որը ավելացվում է 11.01.02.51 /Վ/Բ պահուստային միջոցներ/ ծրագրի 4891/պահուստային միջոցներ/ հոդվածին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (094)839565, dexcuthamaynq@mail.ru,deghdzut.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 10

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների «Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման միջգերատեսչական հանձնաժողովի» 30.04.2020թվականի թիվ 2-2 եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 61-րդ կետի պահանջներով ավագանին որոշում է՝

1.Հաստատել Արարատի մարզի Դեղձուտ համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը:

2. Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթով նախատեսված հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունը համարել փոփոխված «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի պահանջների ապահովման պայմանով և հողերի նպատակային ու գործառնական նշանակությունների փոփոխման (տրանսֆորմացիա) և նրանում սահմանված կառուցապատման փուլերի համապատասխան:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ